

Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

<p>Կազմակերպության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս 	<p>«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com</p>
<p>Հետազոտության թեմա/վերնագիր</p> <ul style="list-style-type: none"> • Հետազոտության թեմա 	<p>Նախապրեքենական փուլի կազմակերպման նպատակները ուղիները և խնդիրները</p>
<p>Ուսուցչի տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Ա.Ա.Յ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ 	<p>Սարգսյան Լիանա Իգիթի Դավար</p> <p>մայրենի, մաթեմատիկա, ես և շրջակա աշխարհը, տեխնոլոգիա, կերպարվեստ 1-4-րդ</p>
<p>Ուսումնական հաստատության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե 	<p>Արտենիի թիվ 1 միջնակարգ դպրոց</p> <p>arteni@schools.am</p> <p>arteni.achoolsite.am</p>

Բովանդակություն

1. Ներածություն:
2. Գլուխ 1. Նախաալիքային փուլի կազմակերպման նպատակները ուղիները և խնդիրները:
3. Գլուխ 2. Նկարագրման միջոցով աշակերտների տառուսուցման կազմակերպումը:
4. Եզրակացություն:
5. Օգտագործված գրականության ցանկ:

Ներածություն

Հանրակրթության համակարգում կարևոր օղակ է տարրական դպրոցը, որի նպատակը կրտսեր դպրոցականների մտավոր, հոգեկան գործընթացների, ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության զարգացումն է, հայեցի հոգեկերտվածքի և արժեհամակարգի ձևավորումը: Նշված նպատակների արդյունավետ իրականացման գործընթացում կարևոր է տարրական դպրոցի ուսուցիչը, ում մասնագիտական պատրաստությամբ, կամպետենտությամբ և աշխատանքի որակով է նաև պայմանավորված մեր հասարակության առաջընթացը: Տարրական դպրոցի ուսուցիչը միաժամանակ պատասխանատու է երեխայի առողջության և կյանքի, գիտելիքների յուրացման մակարդակի, կարողությունների և հմտությունների ձևավորման, նրա սոցիալականացման, կրթության շարունակականության ապահովման համար: Երեխաների նախապատրաստումը դպրոցական ուսուցման մի կողմից ենթադրում է նրանց զարգացածության այնպիսի մակարդակ, որը համապատասխանում է դպրոցի պահանջներին, մյուս կողմից՝ դպրոցը հիմնվում է նախադպրոցական տարիքում երեխաների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների, հմտությունների վրա: Դպրոց ընդունվելը շրջադարձային է երեխայի կյանքում, փոխվում են նրա սոցիալական միջավայրն ու գործունեության ձևերը: Երեխան պետք է պատրաստ լինի դիմակայելու այդ փոփոխություններին: Հենց դրա համար էլ անհրաժեշտ է նրան նախապատրաստել դպրոցին՝ պարզապես ճիշտ կազմակերպելով նրա կյանքը՝ նկատի ունենալով, որ այս տարիքում զգալիորեն փոխվում է կրտսեր դպրոցականի ողջ կենսաձևը, սոցիալական դիրքը, դերը կոլեկտիվում և ընտանիքում: Կրտսեր դպրոցական տարիքում առաջատար գործունեություն դառնում է ուսումնական գործունեությունը, որը շարունակվում է դպրոցական կյանքի ողջ ժամանակահատվածում, սակայն դրա հիմքերը դրվում են ուսուցման առաջին տարիներին:

Այս առումով առաջին դասարանում չափազանց կարևոր է նախաայբբենական փուլի արդյունավետ կազմակերպումն ու իրականացումը, որի նպատակներն ու խնդիրները հարկավոր է հստակորեն առանձնացնել, առաջարկել նոր, ժամանակակից լուծումներ, կիրառել նոր մեթոդներ ու տեխնոլոգիաներ:

<p>Նպատակը եւ հետազոտական հարցը</p>	<p>Ինչպե՞ս նկարագրողման միջոցով աշակերտին տանել տառուսուցում:</p>
<p></p>	<p></p>
<p>Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար</p>	<p>Թեմայի կարեւորությունը պայմանավորված է առաջին դասարանում նախաայբբենական փուլում երեխաների տառուսուցման արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությամբ, քանի որ հենց այս փուլում են դրվում երեխայի գրանառաջության հիմքերը:</p>
<p></p>	<p></p>
<p>Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը</p>	<p>Ուշադրության կենտրոնացում, հիշողության զարգացում, գրանառաջություն, բանավոր խոսքի, գրելու և կարդալու հմտությունների ձևավորում, ինֆրագրամատում:</p>
<p></p>	<p></p>
<p>Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ուղորտին</p>	<p>Առարկայական վերապատրաստման ընթացքում:</p>

Պարագրաֆներ/մասեր

Գլուխ 1. ՆԱԽԱԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈԽՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսուցումը սոցիալապես պայմանավորված գործընթաց է, որը բխում է մարդու՝ որպես հասարակական հարաբերությունների սուբյեկտի վերաբաղման անհրաժեշտությունից: Այստեղից էլ ծագում է ուսուցման սոցիալական կարևոր գործառույթը՝ հասարակության պահանջներին համապատասխան անձի ձևավորումը: Ուսուցումը նպատակաուղղված մանկավարժական գործընթաց է, փանաչողական գործունեություն, որը խթանում է սովորողների՝ գիտական գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ

ձեռք բերելու, ստեղծագործական ընդունակությունները զարգացնելու, գիտական աշխարհայացք
ձևավորելու, բարոյական որակներ ու համոզմունքներ ձեռք բերելու գործընթացը:

Նախադպրոցականից դպրոցական տարիք անցնան ընթացքում տեղի են ունենում մի խումբ վճռորոշ
փոփոխություններ: Երեխաների նախապատրաստումը դպրոցական ուսուցման մի կողմից ենթադրում է նրանց
զարգացածության այնպիսի մակարդակ, որը համապատասխանում է դպրոցի պահանջներին, մյուս կողմից՝
դպրոցը հիմնվում է նախադպրոցական տարիքում երեխաների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների,
հմտությունների վրա: Դպրոց ընդունվելը շրջադարձային է երեխայի կյանքում, փոխվում են նրա
սոցիալական միջավայրն ու գործունեության ձևերը: Երեխան պետք է պատրաստ լինի դիմակայելու այդ
փոփոխություններին: Հենց դրա համար էլ անհրաժեշտ է նրան նախապատրաստել դպրոցին՝ պարզապես
նիշտ կազմակերպելով նրա կյանքը՝ նկատի ունենալով, որ այս տարիքում զգալիորեն փոխվում է կրթությամբ
դպրոցականի ողջ կենսածնը, սոցիալական դիրքը, դերը կոլեկտիվում և ընտանիքում: Կրթության դպրոցական
տարիքում առաջատար գործունեությունն դառնում է ուսումնական գործունեությունը, որը շարունակվում է
դպրոցական կյանքի ողջ ժամանակահատվածում, սակայն դրա հիմքերը դրվում են ուսուցման առաջին
տարիներին:¹ Այս առումով չափազանց կարևորվում է առաջին դասարանում նախադասարանական փուլի նիշտ
կազակերպումը արդյունավետ մեթոդներով ու եղանակներով:

Ուսումնական գործունեությանը երեխայի պատրաստակալության աստիճանի մասին անհրաժեշտ է
ունենալ տեղեկությունների մի քանի խումբ, որոնք կարելի է ստանալ ծնողներից կամ նրա խնամքով զբաղվող
այլ մարդկանցից. **1.** Երեխայի բնավորության առանձնահատկությունները, ուսումնական գործունեության
նկատմամբ նրա վերաբերմունքը. ջանասիրություն, փոքրիկ բանաստեղծություններ, երգեր սովորելու նրա
ցանկությունն ու ընդունակությունը, հաշիվելու, նկարելու, կտրելու, սոսնձելու պարզ առաջադրանքներ
կատարելու կարողություններ, որոշակի ժամանակահատվածում միևնույն գործողությամբ զբաղվելու
ունակություն և այլն: **2.** Երեխայի հետաքրքրությունների շրջանակը. ինչն^օվ է սիրում զբաղվել, ինչպե՞ս է
անցկացնում ազատ ժամանակը, ի՞նչ խաղալիքներով է սիրում խաղալ, հետուստատեսային ի՞նչ
հաղորդումներ է սիրում դիտել և որքան ժամանակ է անընդմեջ տրամադրում հետուստատեսությանը կամ
համացանցին, ի՞նչ ստեղծագործություններ է սիրում ունկնդրել, պատմել, ի՞նչ թեմաների շուրջ է սիրում
զրույցի բռնվել, ի՞նչ հարցեր է տալիս և այլն: **3.** Միջանձնային հարաբերությունները. զգայն^օն է
մարդկանց նկատմամբ, ինչպե՞ս է իրեն պահում տարեկիցների (մեծերի) հետ հաղորդակցվելիս, որևէ գործ
կատարելիս համագործակցո՞ւմ է նրանց հետ, սուտ խոսո՞ւմ է, հարմարվելու հանդուրժողականության,
ապրումակցման որակների առկայությունը և այլն: **4.** Աշխատանքային կարողությունները. տնային
գործերում ունի՞ ոչ բարդ հանձնարարություններ, ինքնասպասարկման, հիգիենայի տարրական

¹ Կրուտեցկի Վ. Ա. – Մանկավարժական հոգեբանության հիմունքները, Երևան, «Լույս» հրատ., 1976:

կարողություններ, սիրով է կատարում իրեն հանձնարարված գործերը, սիրուն է մասնակցել հասարակական հանրօգուտ աշխատանքներին և այլն: 5. Գեղագիտական հետաքրքրություններն ու կարողությունները. ինչպե՞ս է վերաբերվում երաժշտությանը, նկարելու, ծեփելու ուղղությամբ ինչպիսի՞ կարողություններ ունի, ի՞նչ կինոնկարներ է նախընտրում դիտել, հաճախ՞ւմ է մանկական թատրոն և կարողանո՞ւմ է պատմել իր տեսածի մասին, ուշադի՞ր է բնության փոփոխությունների, բնության ձայների և երևույթների նկատմամբ և այլն: 6. Ընկերային հարաբերությունները. ինչպիսի՞ երեխաների հետ է սիրում ընկերություն անել, իրենից փոքր (մեծ), ֆիզիկապես ուժեղ (թույլ), ենթարկվող (լիպեր) և այլն), ինչպե՞ս է վերաբերվում նրանց, ինչպե՞ս է արտահայտվում ընկերների մասին, ի՞նչն է գնահատում ընկերների մեջ և այլն: Այսպիսով՝ դպրոցական ուսուցմանը պատրաստ կարելի է համարել այն երեխաներին, ովքեր ոչ միայն անձնագրային տարիքով և ֆիզիկական տվյալներով համապատասխանում են որոշակի չափանիշների, այլև կարող են մտածել ու ինֆուրույն գործել, համագործակցել տարեկիցների հետ և հասել են հուզական-գագսմունքային արակների զարգացման որոշակի աստիճանի, այսինքն՝ նրանց մտածողությունը, կամքը և հույզերը ներդաշնակորեն համակցված են: Այս ամենի առկայությունը մանկական գիտակցության մեջ հանգեցնում են նրան, որ երեխան դպրոց ընդունվելու պահին իր համար նոր՝ դպրոցական սոցիալական դերին, ուսումնական գործունեության և կոնկրետ ու ընդհանրացված գիտելիքներ ձեռք բերելուն պատրաստ է լինում: Այսինքն՝ նրա մեջ ձևավորված է լինում պարբերական ուսուցման համար անհրաժեշտ հոգեբանական և անձնային պատրաստվածություն: Յուրաքանչյուր 6-6.5 տարեկան երեխա իրավունք ունի սովորելու՝ անկախ նրա ուսումնական գործունեության համար պատրաստ լինելու աստիճանից: Պարզապես դպրոց ընդունվող երեխայի ուսումնասիրությունը, ուսումնական գործունեության պատրաստակալության մակարդակին ներկայացվող վերահիշյալ պահանջների իմացությունն անհրաժեշտ են, որպեսզի ճիշտ ընտրվի երեխայի դպրոցը, տեսակը, հոգեբանամանկավարժական տեսակը՝ ընտրելով ճիշտ համալրվել I դասարանները և ուսումնական գործունեության առաջին փուլում մեթոդապես հմտորեն կազմակերպվի կրթադաստիարակչական գործընթացը, ինչպես նաև բավարար օգնություն կազմակերպվի ծնողներին՝ նրանց երեխաների ուսման և զարգացման համար օպտիմալ պայմանների ստեղծման գործում:

Գրաճանաչության կազմակերպման գործընթացի բովանդակությանն ու մեթոդներին ներկայացվում են սովորողների տարիքային առանձնահատկություններով և հնարավորություններով պայմանավորված որոշակի պահանջներ: Դրանք մասնավորապես բխում են հոգեկան այն գործընթացներից, որոնք ուսուցման ժամանակ ակնառու դեր ունեն: Գրաճանաչության ուսուցումը կազմակերպելիս պիտի հաշվի առնել ուսուցման մատչելիության, զննականության, հաջորդայնության, պարզից դեպի բարդը, ծանոթից անծանոթը գնալու և անհատականության սկզբունքները՝ դասի ժամանակ կարևոր դեր տալով ինչպես դիդակտիկական, այնպես էլ շարժուն խաղերին: Գրաճանաչության ողջ գործընթացում պիտի պահպանել մանկավարժահոգեբանական մի քանի հիմնական պահանջներ. 1. Դասի որոշակի փուլերում ուսուցիչը պիտի

երեխաներին բացատրի, թե իրենք ինչ պիտի անեն այդ պահին, իսկ աշխատանքի ավարտից հետո պիտի ամփոփի՝ ինչ արեցին, ինչ սովորեցին: **2.** Առակերտներին տրվող առաջադրանքները, հարցերն ու բացատրությունները պետք է ձևակերպվեն հակիրճ, հստակ, հասկանալի բառերով և ոչ երկարաժամանակ նախադասություններով: **3.** Պիտի գերակշռեն համադասարանային, փոքր խմբերով և զույգերով աշխատանքները, որոնց ժամանակ ուսուցչուհին պիտի ցույց տա իր սոված առաջադրանքի կատարման նմուշները, բացատրի կատարման ընթացքը հանգամանորեն: **4.** Կարգալու ուսուցման դասի ժամանակ երեխաները պիտի շատ կարգան, իսկ գրավորի դասին շատ գրեն (անուշտ դասարներով): **5.** Դասի ընթացքում անհրաժեշտ է մի քանի անգամ փոխել երեխաների գործունեության տեսակները (կարդա-նկարել-գրել-երգել-խոսել-խաղալ և այլն): **6.** Դիպակտիկ նյութերը, զննական պարագաները, ուսուցման տեխնիկական միջոցները, փոխգործուն մեթոդները, խաղային առաջադրանքները պիտի օգտագործվեն սեղին և այն չափով, որքանով որ կնպաստեն ուսուցման մատչելիությանն ու հետաքրքրաշարժությանը՝ առանց առակերտներին ծանրաբեռնելու և նրանց ուշադրությունը դասի հիմնական նպատակից շեղելու: **7.** Դասը պլանավորելիս անհրաժեշտ է նկատի ունենալ ինչպես ամբողջ դասարանի, այնպես էլ յուրաքանչյուր առակերտի պատրաստակաճությունը՝ կարևորելով ուսումնական նյութի յուրացումը յուրաքանչյուր սովորողի կողմից: **8.** Աշխատել հնարավորության սահմաններում բացառել դիտողություններն ու պատիժները, նախընտրությունը տալ խրախուսանքին: **9.** Ուսուցումը կազմակերպելիս ուսուցիչը պիտի նկատի ունենա, որ աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է իր լեզվաբանական գիտելիքներով ու մանկավարժահոգեբանական հմտություններով և ձգտի մշտապես զբաղվել դրանց ձեռքբերմամբ ու կատարելագործմամբ: **10.** Ինչպես ուսումնական ցանկացած նյութի յուրացման, այնպես էլ գրաճանաչության գործընթացում ուսուցանվող նյութի նկատմամբ երեխայի դրսևորած հետաքրքրությունը ծնվում է այդ նյութը հասկանալու մակարդակից, որքան լավ է երեխան հասկանում նյութը, այնքան նրան այն հետաքրքրում է: Որքան հետաքրքրում է, այնքան երեխան շատ է ուզում իմանալ: Ուսումնական գործունեությունը, որն սկսած առաջին դասարանից դառնում է առաջատար, միայն այն ժամանակ կարող է նպաստել փոքրիկ դպրոցականի անձի զարգացմանը, արժեքների համակարգի ձևավորմանը, երբ առողջ են և (այդ տարիքի համար ընդունված սահմաններում) ավարտուն փուլում են գտնվում նրա հոգեկան գործընթացները (մասնավորապես՝ կամային վարքը, դիտակերպարային մտածողությունը), և երեխան կարողանում է յուրացնել որոշակի սոցիալական նորմեր: Գրաճանաչությունը սովորաբար կազմակերպվում է երեք շրջանով, ա) նախալրջաբանական շրջան, բ) այբբենական կամ գրուսուցման շրջան, գ) հետալրջաբանական շրջան: Պայմանավորված յուրաքանչյուր երկրի կրթական համակարգի առանձնահատկություններով և հայեցի կրթության իրականացման շահեկան դիրքորոշումներով, ինչպես նաև ուսումնական գործունեությունն սկսելու տարիքով գրաճանաչության նախալրջաբանական

երջանին տրամադրվում է տարբեր ժամանակահատված, որի ժամանակ փուլ առ փուլ իրականացվում են վերը նշված խնդիրները:

Հայտնի է, որ կարգալու կարողությունն իր մեջ ներառում է խոսքային միավորի տեսողական պատկերի՝ բառ, բառակապակցություն, նախադասություն և նրա լսախոսաբարձողական կառույցի հարաբերակցությունը: Այդ գործընթացի եռամիասնությունը պահպանվում է կարգալու բոլոր տեսակների ժամանակ անկախ նրանից ընթերցանությունը բարձրաձայն է, թե մտնում: Որքան ցածր մակարդակում է գտնվում կարգալու կարողությունը, այնքան պետք է մեծ տեղ տալ բարձրաձայն ընթերցանությանը. բարձրաձայն կարգալն է օգնում սկսնակ ընթերցողին իմաստավորել, ճանաչել տառային սինվոլները, հմտանալ դրանց վերարտադրման մեջ: Այս իսկ հիմնավորմամբ էլ երեխաներին նախ պիտի սովորեցնել բարձրաձայն կարգալ, ապա աստիճանաբար անցնել մտնում կարգալուն որպես տեղեկատվության ձեռքբերման ընկալման և իմաստավորման արդյունավետ միջոցի: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հմուտ ընթերցողը (կախված բնագրի բարդությունից) մեկ տողն ընթերցելիս կատարում է 3-6 դադար, որոնց ժամանակ նա հասկանում է կարդացածը: Եթե այն այնուամենայնիվ մնում է անհասկանալի, ընթերցողը վերադառնում է ընթերցածին և կարդացածը վերաիմաստավորելու համար կրկնում է վանկը կամ բառը: Կարգալու հմտությունները ձևավորվում են երեք փուլով՝ վերլուծական, համադրական և ավտոմատացված: Առաջին վերլուծական փուլում սկսնակ ընթերցողի տեսողական ընկալման միավորը տառն է կամ վանկը, որոհետև այս փուլում նրա տեսադաշտը սահմանափակ է, և կարդացածի հասկացումը հետ է մնում նրա արտաբերումից, քանի որ մի վանկը մյուսին միացնելու, բառը կարգալու համար երեխայից շատ ժամանակ է պահանջվում: Այդ փուլում երեխան բառը կարգալիս նախ ընթերցում է նրա առաջին վանկը, ապա փորձում է բառը գուշակել և արտաբերել ամբողջությամբ հենվելով միայն առաջին վանկի վրա, և սխալվում է: Սա չպետք է մտահոգի ուսուցչին, որոհետև բառը գուշակելու ունակությունն ու սովորությունը դպրոցականի՝ հասկանալով կարգալու ձգտման հետևանք է: Երկրորդ՝ համադրական փուլում կարգալու ամենավտոմատ միավորը դառնում է բառը, և շարունակվում է զարգանալ գուշակման գործընթացը՝ դառնալով ավելի կատարյալ: Թեև երեխայի՝ սխալներ թույլ տալու հավանականությունը չի բացառվում, սակայն, որպես կանոն, այդ սխալները չեն հանգեցնում կարդացածի ընդհանուր մտքի խախտման, որովհետև աշակերտներն այդ փուլում արդեն ունենում են նախապես կարդացած բնագրում կողմնորոշվելու հնարավորություն: Այսպիսի դեպքում պետք է ուղղել ընթերցող աշակերտին՝ առանց նրան դատապարտելու, որովհետև այդ երևույթը սահուն կարգալու կարողության զարգացման գրավականն է: Ավտոմատացված կարգալու փուլում երեխաներն ընթերցում են ամբողջական նախադասություններով, բնագրի որոշակի հատվածը տեսողությամբ ընդգրկվում է և իմաստավորվում ավելի արագ, քան արտաբերվում է, իսկ կանխագուշակման հավանականությունը գրեթե դառնում է անսխալ: Այս փուլում, որպես կանոն, աշակերտները սահուն կարդում են: Հայերեն գիրը հնչյունային է, այսինքն յուրաքանչյուր հնչյուն ունի իր

նշանակումը տառը: Այդ իսկ պատճառով էլ գրաճանաչության մեթոդիկան խարսխվում է հնչյունային և գրաֆիկական (պատկերային) համակարգերի վրա: Նեցեխնք, որ ժամանակակից հայկական դպրոցում (և ոչ մի- այն) ընդունված է գրաճանաչության ուսուցման հնչյունային մեթոդը, այսինքն գրաճանաչության կազմակերպման գործընթացը իրականացվում է հնչյունից տառը գնացող մեթոդական շղթայով՝ խոսքից հնչյունը առանձնացնելու, բառի հնչյունային կազմը վերլուծելու և համադրելու, հնչյունապատկերը յուրացնելու և կարդալու կարողությունների ձևավորման և զարգացման ուղիով: Կարգալը և գրելը փոքրիկ դպրոցականի համար զգալիորեն բարդ գործունեություն են, որոնք իրականանում են բազմաշեղջուր հոգեկան գործընթացների միջոցով (մտածողություն, հիշողություն, կամք, ուշադրություն, զգացմունք և այլն) Որպեսզի փոքրիկը հմտանա ընթերցանության մեջ, պետք է կարողանա աչքի մեկ ընդգրկումով տեսնել, կամ նրա հիմնական հատվածը և միանգամից կարդալ՝ վանկատելով ընթերցելով միայն անձանոթ բառերը (մտքում): Սակայն սկսնակ ընթերցողը այդ դաշտի միայն մեկ տառն է կարողանում տեսնել և կարդալ, որովհետև նրա ընթերցողական դաշտը դեռևս սահմանափակ է: Այնուամենայնիվ, կարգալու ցանկությանը ոգևորված նա արագ հնչեցնում է այդ տառը: Այնինչ նա պետք է կարդա բոլոր տառերը միասին՝ դրանք ձուլելով միմյանց, և իբրև մեկ ամբողջություն վերարտադրի: Հենց այստեղ էլ ծագում են դժվարություններ բազմաթիվ փոքրիկների համար: Որպեսզի կարդան, նրանք փաստորեն պիտի իրականացնեն ընկալման և ճանաչողական այնքան գործողություն, որքան տառ և վանկ կա բառի մեջ: Միաժամանակ երեխաներից շատերը ոչ միայն հանախ մոլորվում են տողերի մեջ, այլև ուշադրությունը բևեռելով կարգալու գործընթացի մեխանիկական կողմին ոչ միշտ են հասկանում կարդացածը, այդ պատճառով մի քանի անգամ կրկնում են բառի վանկերը կամ ամբողջական բառերը: Երբեմն որոշ աշակերտներ ոչ թե կարդում են, այլ ձգտում են գուշակել բառը՝ կարգալով միայն այդ բառի առաջին վանկը: Այս երևույթներն աստիճանաբար անհետանում են, երբ մեծանում է երեխայի :

Ի տարբերություն գրավորի՝ 5-6 տարեկան երեխաները (նույնիսկ ավելի փոքր տարիքում) ճանաչում են շատ տառեր, մինչև դպրոց գնալը իրենք են խնդրում մեծերին՝ իրենց կարգալ սովորեցնել, շատերը կարգալու նախնական կարողություններ նույնիսկ ձեռք են բերում ինֆուրույն, գրեթե առանց մեծերի օգնության, առանց դժվարությունների: Բանն այն է, որ դեռևս նախադպրոցական տարիքում բուն զարգացում են ապրում երեխայի խոսքի օրգանները, որոնք կարգալու կարողությունների յուրացման հիմքն են: Այդ պատճառով 6-7 տարեկան ժամանակահատվածն առավել բարենպաստ է կարգալ սովորեցնելու համար: Սակայն կան շատ վեց տարեկաններ, որոնք տառաճանաչ են, բայց կարգալու գործընթացում լուրջ դժվարությունների են հանդիպում: Կարգալու կարողություններն առավել դժվարությամբ են ձևավորվում, երբ կարգալիս երեխաները բառը բաժանում են մասերի վանկերի, վանկերը՝ տառերի: Այդ դեպքում դժվարությամբ է յուրացվում նաև նախադասությունը: Նախադասության, բառի, վանկի, հնչյունի և տառի մասին աշակերտներին գաղափար սալու համար պիտի անպայման իրականացվեն հատուկ վարժություններ և

խաղեր: Կարևորն այս փուլում հնչյունային լսողության զարգացումն է, խոսքի բուրք հնչյունները ճիշտ լսելու և առանձնացնելու, հստակ արտասանելու կարողության ձևավորումը: Մինչև երեխան չկարողանա կատարել բառի հնչյունային վերլուծություն, գծել հնչյունային (վանկային) գծապատկերը և ազատորեն կողմնորոշվել գծապատկերում (գտնել հնչյունի տեղը, որտեղ ձայնավորը, բաղաձայնը), նա կարող սովորել չի կարող; Վերլուծելու կարողության անբավարար զարգացումը դառնում է կարդալու և գրելու գործընթացում երեխաների թույլ տրված բազմաթիվ սխալների պատճառ, հեգելով կարդալ, կարդալ՝ ավելացնելով կամ պակասեցնելով տառեր, հայելանման գրություն, տառերի բացթողում, տառերի շփոթում (նման գրաֆիկական տեսք ունեցող) և այլն: Այդ դժվարություններն առավել ակնառու են գրավորի գործընթացում: Չափահասը գրում է առանց նկատելու այն ավտոմատացված գործողությունները, որոնք առաջին դասարանցիների մեծ մասը դժվարությամբ է հաղթահարում գրավորի ժամանակ: Դա հասկանալի է, որովհետև գրավորի համար անհրաժեշտ շարժողական գործընթացը երեխայից պահանջում է առավել բազմաբնույթ և բազմազան, ինֆորմայն ճանաչող և բարդ գործողություններ ճանաչող շարժումների կոորդինացիա, մկանների լարում, ինչպես նաև երկար ժամանակ միևնույն դիրքում անշարժ մնալու կարողություն: Անհրաժեշտ ճանաչողական գործողություններ կատարելու համար երեխայի դեռևս անկատար նյարդային համակարգը, ձեռքի մատների մանր ֆալանգների անբավարար զարգացածությունը, նստակյաց աշխատելու ուղղությամբ ցածր դիմադրողականությունը գրավորի ընթացքում 6 տարեկան երեխաների առջև դնում են արտակարգ բարդ խնդիրներ: Չպետք է մոռանալ, որ նա պետք է հետևի իր նստած դիրքին, գրիչը բռնելու և տետրի տեղադրման ձևին, հիշի գրվող տառի պատկերը, տողի վրա նրա գրված դիրքը, տառամասնիկները, դրանց գրելու ձևը, մյուս տառերի հետ կապակցման ձևերը: Սա ոչ միայն դանդաղեցնում է գրելու տեմպը, այլև հոգնեցնում է երեխային ինչպես ֆիզիկապես, այնպես էլ մտավորապես: Սրանով է պայմանավորված գրավորին հատուկ նախապատրաստումը, մարզողական և բեռնաթափող վարժությունների կազմակերպումը, գրավորի և բանավորի համար նախատեսված ժամանակի փոխհաջորդականության հեզգրիտ որոշումը և այլն: Գրավորի հետ կապված բարդություններն առանց երեխաներին ցավ պատճառելու հաղթահարելու համար առաջին հերթին պիտի հիշել, որ գրավորի շարժողական գործընթացը, ինչպես ցանկացած շարժողական հմտությունների ձևավորման գործընթաց, ունի որոշակի օրինաչափություններ, որոնց հետ պետք է հաշվի նստել:

**Գլուխ 2. ՆԿԱՐԱԶԱՐԴՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՏԱՌՈՒՍՈՒՑՄԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

Անառարկելի է, որ գրելու կարողության արդյունավետ ձևավորման համար կարևոր է երեխայի մտավոր, ֆիզիկական, կազմաբնախոսական, հոգեկան և անձնային այլ համալիր առանձնահատկությունների

հաշվառումը: Սկսելով գրավոր աշխատանքը և տառերի կառուցվածքի ուսումնասիրությունը պետք է նախ առակերտներին սովորեցնել պահպանել որոշակի տարրական պահանջներ, ճիշտ դնել տետրը, ճիշտ բռնել գրիչը, ճշտորեն ներկայացնել տառի ձևը, տետրի սողերի վրա հավասարաչափ տեղադրել տառերը, ճիշտ շարժել գրիչը սողի վրա, բառերը գրելիս պահպանել տառերի կապակցման ձևերը, նախապես որոշել՝ բառը կտեղավորվի՞² արդյոք սողի վրա և կատարել համապատասխան ֆայլեր: Այդպիսի դժվարին և ֆրոնաջան աշխատանք կատարելու համար առակերտը չի կարող միաժամանակ պահպանել բոլոր պահանջները, առաջին հերթին նա խախտում է նստելու ձևը, որի հետևանքով ոսկրամկանային համակարգում տեղի են ունենում լուրջ խաթարումներ, ծուլում է ողնաշարը, սեղմվում է կրծքավանդակը, դանդաղում է շնչառությունը և դժվարանում է արյան շրջանառությունը, խախտվում է սրտի և այլ օրգանների աշխատանքը: Այս երևույթները հետագայում հանգեցնում են հիվանդագին դրսևորումների, ինչպես նաև գրելու կարողության ձևավորման և տառերի գրության գրաֆիկական սխալների, բացթողումների և այլն: Գրաֆիկական իմաստով տառերի ոչ ճիշտ գրության պատճառները կարող են կապված լինել նաև երեխայի առողջական վիճակի, մասնավորապես տարած մանկական որոշ հիվանդությունների հետ. կան հիվանդ երեխաներ, որոնք առանց հատուկ բժշկական ստուգումների չեն հայտնաբերվում: Նման դեպքում անտեղյակությունը ոչ միայն ապարդյուն կդարձնի և՛ ուսուցչի, և՛ առակերտի ջանքերը, այլև կվնասվի երեխայի նյարդային համակարգը, երեխան կհուսահատվի, կդառնա ուսումնական գործընթացի նկատմամբ անտարբեր: Կարգալու և գրելու գործընթացի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ գործընթացը մանկավարժներն ճիշտ կազմակերպելու դեպքում առակերտը գրում է՝ կիսաձայն շնչալով գրելիք նյութը. ինքն է իրեն օգնում շրթունքներով կիսաձայն վերարտադրելով գրելիքը: Ուսուցիչը պիտի սովորեցնի երեխաներին բառն արտասանել, այսինքն ինքն իրեն թելադրել գրելիս (թե արտագրության, թե՛ թելադրության ժամանակ) շնչով ճիշտ վանկատելով միաժամանակ ձգտելով որսալ բառի յուրաքանչյուր հնչյունը և հնչյունների հաջորդականությունը: Կան երեխաներ, որոնց մեջ ուսուցման առաջին իսկ օրվանից նկատելի են դառնում դանդաղկոտությունն ու շարժողական կարողությունների անբավարար ձևավորվածությունը: Որոշ երեխաների մեջ, մասնավորապես ուսուցման առաջին փուլում, նկատվում են անկայուն ֆայլք, շարժումների վատ կառավարում, անհավասարակշռություն, արձագանքելու անբավարար կարողություն, մարմնի, գլխի և վերջույթների անսովոր դիրք²: Այդպիսի ախտանիշներ ունեցող երեխաները, ըստ էության, առողջ երեխաներ են, պարզապես ունեն փոփոխ, աննշան շեղումներ, որոնք պետք է դառնան ուսուցչի մտահոգության առարկան: Չիմանալ, չհանաչել երեխաներին, չսեսնել այս տարբերությունները նշանակում է այդ երեխաներին պատճառել հոգեբանաբարոյական լուրջ ցավ: Ուսումնական գործընթացի առաջին իսկ օրերից, որպես կանոն, յուրաքանչյուր առաջին դասարանում լինում են երեխաներ, որոնք չեն կարողանում սողի վրա

²Տեր-Գրիգորյան Ա. – Կարգալու և գրելու սկզբնական կարողությունների ձևավորումը, Երևան, «Լույս» հրատ., 1985:

գրել, պահպանել լուսանցքը, խախտում են տառերի և տառամասնիկների չափը, համաչափությունը և այլն: Բանն այն է, որ գրելու գործողությունը պահանջում է ձեռքի դաստակի սահուն շարժումներ, որոնք մկանների անբավարար զարգացման, մկանային տոնուսի խախտման պատճառով հաճախ դառնում են անկազմակերպ, անկառավարելի: Այդպիսի առակերտները գրելիս սովորաբար գրիչը բռնում են սխալ՝ մատների սխալ համադրմամբ, հաճախ՝ բունցով, գրելու գործընթացն իրականացնում են ամբողջ դաստակի, երբեմն էլ ողջ ձեռքի շարժումների միջոցով: Սա բերում է նրան, որ երեխաները գրում են շատ դանդաղ և անընթեռնելի, տառերը տողերի վրա և այլն: Առանձնապես դժվարություն է առաջանում տառերի առանձին մասնիկները միացնելիս, որի պատճառով կտրուկ խախտվում է սահուն գրելու գործընթացը: Ուսուցիչները ներկայացնում են սխալ գրելու երկու հիմնական տեսակ. կան առակերտներ, որոնք սկսում են գրել լարված, սակայն անհրաժեշտ մեծության տառերով, այնուհետև լարվածության աստիճանաբար մեծանալու պատճառով դրանց չափերը փոքրանում են, տողերն իջնում են ներքև, ձեռագիրը դառնում է անընթեռնելի: Կան նաև երեխաներ, որոնք սկսում են գրել մանր տառերով, գրեթե առանց լարվածության, հանգիստ, անփույթ, այնուհետև տառերի չափերը գնալով մեծանում են, և մատները սկսում են պրկվել, լարվել: Հոգեբանների հավաստմամբ՝ տառերի անհամաչափությունը մասնավորապես նկատելի է թույլ նյարդային համակարգ ունեցող երեխաների գրելու գործընթացում, քանի որ նյարդային լարվածությունը խանգարում է գրավորի պահին մատների շարժումների կառավարմանը: Այդ երեխաները սովորաբար սկսում են գրել համաչափ տառերով, սակայն անպատշաճ լիարեն սկսվում են իրար հետևից շարվել անհամաչափ, ոչ ճիշտ գրված տառեր, տողը մեկ բարձրանում է, մեկ իջնում, ձեռագիրը դառնում է անընթեռնելի: Ուսուցիչը պետք է նկատի ունենա, որ ոչ բոլոր երեխաներն են գրել սովորում միևնույն տեմպով: Կան երեխաներ, որոնք ոչ մի արատ չունեն, սակայն դժվարությամբ են ձեռք բերում գրելու կարողությունները: Գրելու բարդությունները հաղթահարելու, վերոհիշյալ երևույթները կանխելու համար հարկավոր է նախ քաջատեղյակ լինել առաջին դասարանցու առանձնահատկություններին, առողջական վիճակին և ճիշտ կողմնորոշվել նրանց հետ տարվող աշխատանքներում: Կարևոր է նաև երեխաների հետ տարվող ուսումնական աշխատանքն սկսել խաղային գործունեությամբ երեխայի առջև դնելով խաղային և գործնական խնդիրներ: Ընդ որում, այդ բնույթի աշխատանքները պիտի կատարվեն ողջ գրահանաչության շրջանում, ոչ թե սահմանափակվեն միայն նախադասարանական շրջանով:

Ողջ գրահանաչության շրջանում պիտի կատարվեն նաև մատների նուրբ ֆալանգները զարգացնող վարժություններ. • մատների մերսում, • մատների մարմնամարզություն և մատնային խաղեր, • պլաստիլինով և կավով ծեփումներ, • մանր առարկաներով գործողություններ կատարելու առաջադրանքներ (խճանկարներ, հուլունքների հավաքում թելի վրա, աշխատանք կոնստրուկտորով, կարճ, բարակ թելերով պարանի հյուսում, կոճակների կոճկում, նախ մեծ, ապա՝ փոքր պատկերների ներկում, մկրատով կտրում և այլն), • ողնաշարի, պարանոցի վարժություններ, • շարժուն դադարներ և այլն: Վերոհիշյալ վարժությունները պիտի կատարել

համբերատար և գրաճանաչության ուսուցման բուր փուլերում հիշելով, որ 6-7 տարեկան երեխաների գրելու գործընթացը պիտի տևի 7-10 րոպե, այնուհետև անհրաժեշտ է ընդմիջել, կատարել լարվածությունը բուլացնող վարժություններ, ապա նոր շարունակել. եթե երեխան չի ցանկանում շարունակել գրավոր աշխատանքը, նրան պարտադրել չի կարելի: Որպեսզի երեխայի մեջ գրելու ցանկություն առաջանա (և ոչ միայն գրելու), նա պիտի բավականություն ստանա իր գործունեությունից և նրա արդյունքից: Կարգալու և գրելու գործընթացը բացի իր հիմնական առանձնահատկություններից ունի նաև սվյալ երկրի լեզուն արդեն յուրացրած երեխայի լեզվաընկալունակությամբ պայմանավորված այլ առանձնահատկություններ, որոնց հաշվառմամբ էլ կազմվում են սվյալ երկրների այբբենաբանները³:

Նախայբբենական շրջանում տառուսուցումը արդյունավետ կազմակերպելու համար մենք առաջարկում ենք մի քանի մեթոդներ, որոնց կիրառությունը կօգնի հաղթահարել առաջացած դժվարությունները, ուսուցման գործընթացը կդարձնի առավել հետաքրքիր ու ակտիվ: Նախ նշենք, որ երեխայի հիշողության զարգացման վրա մեծ ազդեցություն ունեն գույները: Նկարագրումը ուսուցման ընթացքում ոչ միայն զարգացնում է գունազգացողությունը, այլև նպաստում է հիշողության, մանր մոտորիկայի զարգացմանը:

Որպես հետազոտական աշխատանք՝ մենք առաջարկում ենք կիրառել «Լուսակիր» մեթոդը⁴, ընդ որում, կանաչ, դեղին կամ կարմիր թղթերը երեխաները կարող են ներկել ինֆուսուրային: Փամանակի սպառյալն պատճառով շատ հաճախ ուսուցիչները դասապրոցեսում իրենց սված հարցերին մեկ-երկու առակերտից պատասխան ստանալուց հետո առաջ են անցնում: Այս մոտեցումն ուսուցչին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու, թե ինչ չափով են սվյալ թեման յուրացրել դասարանի բուր առակերտները: Նման իրավիճակում օգտակար է լուսակիր հնարի կիրառումը: Թեման ավարտելուց հետո ուսուցիչը դասարանին հարցնում է թեմայի յուրացման մասին: Յուրաքանչյուր առակերտ բարձրացնում է իր մոտ գտնվող կանաչ, դեղին, կարմիր թղթերից որևէ մեկը: Գիտափորձը նախատեսում ենք անկացնել առաջին դասարանում նախայբբենական շրջանում: Եթե առակերտը բարձրացնում է կանաչ թղթիկը, նշանակում է ամբողջությամբ յուրացրել է սվյալ թեման: Եթե բարձրացնում է դեղին թղթիկը, նշանակում է մասնակի է յուրացրել թեման: Իսկ կարմիր թղթիկ բարձրացնում են այն առակերտները, ովքեր չեն յուրացրել թեման: Եթե կարմիր և դեղին թղթիկներ բարձրացնող առակերտների թիվը շատ մեծ է, ապա նախընտրելի է, որ ուսուցիչը նորից անդրադառնա թեմային: Իսկ եթե թիվը մեծ չէ, ապա կանաչ գույն բարձրացրած առակերտներին կարելի է հանձնարարել աջակցել իրենց դասընկերներին:

³ Սարգսյան Վ. Ա. – Նկարելուկները հայերենում, Երևան «9-րդ հրատարակիչ» հրատ., 2000:

⁴ <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf>

<p>Գրականության ակնարկ</p> <ul style="list-style-type: none"> • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: <p>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</p>	<p>Կրուտեցկի Վ. Ա. – Մանկավարժական հոգեբանության հիմունքները, Երևան, «Լույս» հրատ., 1976:</p> <p>Տեր-Գրիգորյան Ա. – Կարգալու և գրելու սկզբնական կարողությունների ձևավորումը, Երևան, «Լույս» հրատ., 1985:</p> <p>Սարգսյան Վ. Ա. – Նկարելուկները հայերենում, Երևան «9-րդ հրատ.» հրատ., 2000:</p> <p>https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf</p>
<p>Օգտագործված մեթոդները, գործիքները</p>	<p>Դիտում, զրույց, վերլուծություն, համեմատություն, գիտափորձ:</p>
<p>Իրականացման ժամանակահատվածը</p>	
<p>1-ին դասարանի նախադասարանական փուլի ընթացքում</p>	
<p>Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/</p>	<p>1-ին դասարան</p>

Եզրակացություններ, առաջարկություններ

Ուսումնասիրելով նախադասարանական շրջանում նկարագրարդյուն միջոցով տառուսուցման կազմակերպման խնդիրները՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

- դեռևս նախադասարանական տարիքում բուն գարգացում են ապրում երեխայի խոսքի օգանները, սրտն կարգալու կարողությունների յուրացման հիմքն են,
- գրաճանաչության ուսուցումը կազմակերպելիս պիտի հաշվի առնել ուսուցման մատչելիության, զննականության, հաջորդայնության, պարզից դեպի բարձր, ծանրից անձանորը գնալու և անհատականության սկզբունքները՝ դասի ժամանակ կարևոր դեր տալով ինչպես դիպակտիկական, այնպես էլ շարժուն խողերին և նկարագրարդյունը:

- գրելու կարողության արդյունավետ ձևավորման համար կարևոր է երեխայի մտավոր, ֆիզիկական, կազմաբնախոսական, հոգեկան և անձնային այլ համալիր առանձնահատկությունների հաշվառումը,
- Նկարագրումը տառուսուցման ընթացքում ոչ միայն զարգացնում է գունազգացողությունը, այլև նպաստում է հիշողության, մանր մոտորիկայի զարգացմանը:
- Դասի ընթացքում անհրաժեշտ է մի քանի անգամ փոխել երեխաների գործունեության տեսակները (կարդա - նկարել - գրել - երգել - խոսել - խաղալ և այլն):

<p>Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին</p>	
<p>Նկարագրումը տառուսուցման ընթացքում ոչ միայն զարգացնում է գունազգացողությունը, այլև նպաստում է հիշողության, մանր մոտորիկայի զարգացմանը, առավել արդյունավետ և հետաքրքիր է դարձնում դասապրոցեսը:</p>	
<p>Այլ տեղեկատվություն</p>	

Օգտագործված գրականության ցանկ

1. Կրուտեցկի Վ. Ա. – Մանկավարժական հոգեբանության հիմունքները, Երևան, «Լույս» հրատ., 1976:
2. Սարգսյան Վ. Ա. – Այբբենարան, Երևան, «Մակմիլան – Արմենիա» հրատ., 2006:
3. Սարգսյան Վ. Ա. – Հայերենի դասագիրք – 1», Երևան, «Մակմիլան – Արմենիա» հրատ., 2006:
4. Սարգսյան Վ. Ա. – Այբբենարանի համառոտ ուղեցույց, Երևան, «Մակմիլան – Արմենիա», հրատ., 2006:
5. Սարգսյան Վ. Ա. – Հայերենի դասագիրք – 1, մեթոդական ուղեցույց, Երևան, «Մակմիլան – Արմենիա», հրատ., 2006:
6. Սարգսյան Վ. Ա. – Խաղագիրք – 1, Երևան, «Լեզվագետ» հրատ., 1996:
7. Սարգսյան Վ. Ա. – Խաղագիրք – 2, «Լեզվագետ» հրատ., 1999:

8. Սարգսյան Վ. Ա. – Հայոց լեզվի դարձվածներն ակարներով, Երևան, «Լույս» հրատ., 1989:
9. Սարգսյան Վ. Ա., Թադևոսյան Ա. Վ. – Հայկական խաչքառ, լեզվատրամաբանական խրատիկաներ, Երևան, «9-րդ հրատալիք» հրատ., 2002:
10. Սարգսյան Վ. Ա. – Նկարելու կերպը հայերենում, Երևան «9-րդ հրատալիք» հրատ., 2000:
11. Սարգսյան Վ. Ա. – Պատկերագիր այբուբեն, Երևան, «Մակմիլան – Արմենիա» հրատ., 2005:
12. Սարգսյան Վ. Ա. – Մաշտոցի բանակը, Հալեպ, «Կիլիկիա» հրատ., 2002:
13. Վարդանյան Ա. – «Գրաճանաչության ուսուցման տեսական հիմունքները», Երևան, «Միտք» հրատ., 1970:
14. Տեր-Գրիգորյան Ա. – Կարգալու և գրելու սկզբնական կարողությունների ձևավորումը, Երևան, «Լույս» հրատ., 1985:
15. Տեր-Գրիգորյան Ա. – Հայոց լեզուն տարրական դասարաններում, Երևան, «Լույս» հրատ., 1988:
16. Տեր-Գրիգորյան Ա. – « Արևիկ » այբբենարանի մեթոդական ուղեցույց, Երևան, «Լույս» հրատ., 1983:
17. Տեր-Գրիգորյան Ա. – Հայոց լեզվի մեթոդիկա: Ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի համար, Երևան, «Լույս» հրատ., 1980:
18. Քյուրբջյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մարտիրոսյան Լ. – Այբբենարան, մեթոդական ուղեցույց, Երևան, «Լույս», հրատ., 2001:
19. Մայրենի լեզու: Հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ ուսումնական ծրագիր, Երևան, 2005: